ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----------2026թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Քանդակագործ Մասիմո Լիպպիից որպես նվիրատվություն ընդունել «Խաղաղության սեղան» մարմարե քանդակը:

2. Տալ համաձայնություն քանդակագործ Մասիմո Լիպպիի «Խաղաղության սեղան» մարմարե քանդակը Երևանի Անգլիական այգում տեղադրելուն՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի ---------- ---ի
N--- Ա որոշման

Իտալացի քանդակագործ Մասսիմո Լիպպիի «Խաղաղության սեղան» քանդակի տեղադրման էսքիզային առաջարկ

Տեղը՝ Անգլիական այգի
Նյութը՝ կարարայի մարմար

ԵՐԵՎԱՆ 2026


Քանդակի տեղադրման
առաջարկ
4.0
2.55
2.0
Բեյրութի փող.
Իտալիայի փող.
Սոկրատ Խրիմյան փող.
Դեսպանատուն
Դեսպանատուն
парк 2800-
летия Еревана
Посольство
Италии
Пепо
Английский парк
Продавец воды
Героям Майского
восстания
улица Италии, 1
Акцент
Кофе парк
Плюс Сервис
Театр Мгера
Мкртчяна
1
2
3
3/1
4
16
18
20
20А
20Ш
20/1
20/2
20/3
20/7
22

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականին Փարաքար համայնքում անցկացվեց Արա Հարությունյանի անվան «PAX ARMENICA» (Հայաստանի խաղաղություն) քանդակագործության միջազգային փառատոնը: Այս նախաձեռնությունը կարևոր մշակութային իրադարձություն էր, որի նպատակն էր խթանել միջազգային համագործակցությունը ժամանակակից քանդակագործության ոլորտում և ամրապնդել Հայաստանի կապերը արտասահմանյան արվեստի կենտրոնների հետ:

Փառատոնի շրջանակներում Կարարայի քաղաքապետարանը Հայաստանին նվիրեց 37 տոննա մարմար՝ որպես Երևան–Կարարա քույր քաղաքների երկարամյա բարեկամության և մշակութային համագործակցության խորհրդանշական արտահայտություն: Այս ժեստը նաև ընդգծեց Կարարայի՝ որպես աշխարհի հայտնի մարմարի կենտրոնի, դերը միջազգային արվեստի նախագծերում:

Փառատոնի ընթացքում ստեղծագործական աշխատանքներով հանդես եկան մի շարք միջազգային քանդակագործներ, այդ թվում՝ իտալացի քանդակագործ Մասիմո Լիպպին: Նրա մարմարից կերտված քանդակը նախատեսված է նվիրելու Երևան քաղաքին՝ որպես ժամանակակից արվեստի և միջմշակութային երկխոսության խորհրդանիշ և տեղադրել Անգլիական այգում:

Մասիմո Լիպպին իտալացի քանդակագործ և արվեստագետ է, որը հայտնի է իր ստեղծագործական գործունեությամբ Իտալիայում և այլ երկրներում: Նա երկար տարիներ դասավանդել է Կարարայի և Մաչերատայի համալսարաններում և ներկայումս Ֆլորենցիայի Գեղեցիկ արվեստների ակադեմիայի քանդակագործության պրոֆեսոր է: Նրա մասնագիտական գործունեությունը ներառում է մասնակցություն միջազգային սիմպոզիումներին, այդ թվում՝ Լարհում (Գերմանիա) և Վիտորիայում (Իսպանիա): Լիպպիի աշխատանքները ներկայացվել են տարբեր ազգային և միջազգային ցուցահանդեսներում ու թանգարաններում, որոնց թվում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Տոկիոյի Ժամանակակից արվեստի թանգարանը:

Նրա ստեղծագործական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում բրոնզե քանդակները և խոշոր մասշտաբի պատվերային աշխատանքները: 2000–2006 թվականների ընթացքում նա իրականացրել է Սիենայի Սուրբ Դոմենիկի բազիլիկ եկեղեցու բրոնզե դուռը և Սիենայի տաճարի բրոնզե «Խաչելությունը», որոնք համարվում են նրա ստեղծագործական հասունության կարևոր օրինակներ:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ